ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69,
(37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 28 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ Է/40/1116-26 առ 06 05 2026թ.

«Մաքս Շին» ՍՊԸ
տնօրեն
Ս. Պետրոսյանին

(Ծանուցում №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-46/25-01/140 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

Հարգելի՛ պարոն Պետրոսյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար ջրասույզ խորքային պոմպի ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-46/25» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Մաքս Շին» ՍՊԸ-ի միջև 2025 թվականի մայիսի 5-ին կնքվել է № ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-46/25-01/140 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 2-ով (մատակարարման ժամանակացույց) ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանված «պայմանագիրը կնքելուց հետո 90 օրացուցային օրվա ընթացքում», սակայն մինչ օրս Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխան ապրանքները Ձեր կողմից մատակարարված չեն:

Հաշվի առնելով Պայմանագրի դրույթները տեղեկացնում եմ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Մաքս Շին» ՍՊԸ-ի միջև 2025թ. մայիսի 6-ին կնքված № ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-46/25-01/140 պայմանագիրը և առաջարկում եմ 5 աշխատանքային օրվա ընթացքում «ՀԱԷԿ» ՓԲ ընկերության «Կոնվերս բանկ» ՓԲԸ 1930000199200100 հաշվեհամարին վճարել պայմանագրի (83 250 ՀՀ դրամ) և որակավորման (124 875 ՀՀ դրամ) ապահովումները:

Հարգանքով՝

ԳՏՏ - ԸՀՏ Ս. Մաթևոսյան

Կատ.
ԳԸԲ գլխավոր մասնագետ –
խմբի ղեկավար
Հռիփսիմե Ռամազյան
Հեռ. 010-20-04-91